

որ անապատը ծաղկալից պարտէզ է դարձնում և ժայռից ջուր բղխեցնում: Ապագրոս անշարժ էր և սառած, նորա մարմինն արդէն լուծուում էր, երբ Քրիստոս ասաց նորան, վեր կաց և դուրս եկ գերեզմանից: Ինչ որ պատահեցաւ այն ժամանակ, պիտի կրրկնուի և ապագայ դարերում: «Ես եմ յարութիւն և կեանք» ասաց Տէրը: Արդեօք այս խօսքերը չէ՞ն վերաբերում այն մարդոց, որոնց հոգիք մեռած են: Արդեօք Քրիստոս ամեն ինչ փոխելու և նորոգելու համար չեկա՞ւ: «Բայց եթէ ինչ ի Քրիստոս, ասում է Պօղոս առաքեալը, նոր արարած իցէ. զի հինն անց և արդ նոր եղև ամենայն. (Երկրորդ Կորնթ. Ե. 17):

(ԲՅՐԻՆՆԷ)

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՏՐԿՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆԸ

ՀԻՆ ՀԵՍԱՐԵԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ.

(ՀԻՆ-ՆԱԿԻ-ՆԷՆ)

Երկու մատաղահաս ամուսնացած կանայք, ծերունի Անդիֆոնոսի աղջկունք — Պանդիրիսն և Պինացիան — թողած են իրանց ամուսիններիրից, որոնք իրանց բոլոր հարստութիւնը կորցրած լինելով գնում են օտար հեռաւոր աշխարհներ իրանց գործերը կարգի բերելու համար: Մի քանի տարի շարունակ ամուսիններն իրանց մասին ոչ մի տեղեկութիւն չեն հաղորդում, բայց հաւատարիմ կանայք ամեն առաւօտ ուղարկում են նաւահանգիստ իրանց ստրկին իմանալու թէ արդեօք չեն եկել նոցա ամուսինները: Ի գուր ծերունի Անտիֆոնոսը համոզում է իւր աղջկերանց մոռանալ իրանց մարդոց և նորից ամուսնանալ:

Ձեմ կարող տանել, ասում է Հայրն, որ դուք մինչև ցայժմ չէք բաժանուում այդ աղքատներից: — Հայրիկ, պատասխանում է

այս յանդիմանութեան հաւատարիմ Պինացիան, ինձ հաճոյական է իմ ազգասիրին, նա իմ թագաւորն է, իսկ ես նորա թագուհին, ես նրան կսիրեմ ազգաստութեան մէջ էլ, ինչպէս սիրում էի հարրատութեան ժամանակ»։ Յիմարութիւն է նոքա իսկական աւազակներ են, ազգասններ են, և դուք նրանց յարգում էք։

Վու ինձ ոչ թէ նորա հարստութեան, այլ նոյն իսկ նորա անձնաւորութեան տուիր։ Աերջապէս ազնիւ կանանցք սիրելի, իսկ նոցա հօրն ատելի ամուսինները վերադառնում են։ Նոքա մեծ հարստութիւն ձեռք բերին, նոցա նաւերը լիքն են գանձերով, բայց նոքա բերին իրանց հետ և ստրկուհիք, որոնք ածում էին սրինգ, ծնծղայ և իրանք էլ շատ գեղեցիկ էին։ Հաւատարիմ կանանց վարձատրութիւնն այն է լինում, որ նոցա ամուսիններն իրանց տներում կազմում են կանանոցներ։ Բայց աւելի զգուելի է նոցա հայրը։

Կսելով իւր փեսաների հարստութիւնը, նա իսկոյն գալիս է նոցա մօտ, շնորհաւորում է նոցա յաջողութիւնն և իւր բաժին խընդրում է երկու կամ երեք սրինգ ածող աղջիկներ։

Կարծես սրանից լաւ նկարագրութիւն հին հռովմէական հարուստ տան չէ կարող լինել։ Մենք կարող ենք փոքր ինչ կասկածել Պլաւտոսին չափազանցութեան մէջ, մի քանի գործող անձանց արուեստականութեան մէջ, բայց չէ կարելի չխոստովանել, որ նա ընտիր կերպով լուսաբանել է հին ընտանիքն և այն դերն, որ խաղում էր նորա մէջ ստրկութիւնը։ Անհնար է չհամակրել այս երկու ազնիւ, քնքոյշ, հաւատարիմ ամուսիններին, սոքա երկու ծաղիկներ են ոտնակոխ եղած կեղտոտ ոտներին, նոքա կորան առանց մէկի կարեկցութիւնը շարժելու։ Բայց հռովմայեցի մեծատուն կանանց մէջ սակաւ էին այդպիսիք։ Հռովմայեցի Տիկնայք երբեմն իրանց մարդկանցից պակաս չէին անառակութեան մէջ։

Ս. նահատակ Յուստինոս փիլիսոսիան իւր «Ջատագովութիւն» երկասիրութեան մէջ յիշում է մի ամուսնաւոր կնոջ, որ մինչև քրիստոնէութիւն ընդունելը վարում էր ամօթալի կեանք, արբում էր և անառակութիւն էր անում, իւր ստրուկները և օտար սիրականները հետ։ Հռովմայեցիք երբեմն մատնացոյց էին լինում պատրիկ տղայոց վերայ, որոնց երեսի գծագրութիւնը վկայում էր

նոցա ստրկական ծագման և ապացուցանում նոցա մայրերի անառակութիւնը: Փողովուրդը ծիծաղում էր նոցա երեսի դեղին գոյնի վերայ, որ ծածկուած էր մազերով, տգեղ ատամների վերայ, այն մեծատանց կերպարանքի վերայ, որոնք յիշեցնում էին ասորի ըստրուկ:

Կլաւդիոսը մինչև անգամ օրէնք հրատարակեց, որով ամեն ազնիւ ծագումն ունեցող կին, որ կյանդիմանուէր իւր յարաբերութեան համար իրան չպատկանող ստրկի հետ, պէտք է զրկուէր ազատութիւնից և յանձնուէր այդ ստրկի տիրոջ: Բայց այս խիստ օրէնքները շատ սակաւ ազդեցին բարուց ուղղութեան վերայ, այնպէս որ Կոստանդիանոս ստիպուած էր նորոգելու օրէնքներն իւր իշխանութեան սկզբում: Յուստինիանոսի ժամանակին այն օրէնքը, կարծես, լոկ աւանդութիւն էր դարձած, գոնէ ամենեւին գործադրութեան մէջ չէր երևում: Ճիշտն ասելով, Կոստանդիանոս Մեծն ի լրումն վերոյիշեալ օրէնքի, 320 թուականին, իւր քրիստոնէական եռանդը չափազանցութեան հասցնելով, հրամայեց վերոյիշեալ դէպքում ազնուական տիկնոջ ի մահ զատապարտել, իսկ ըստրուկին այրել խարոյկի վերայ, եթէ նա նոյն իսկ ազնուական տիկնոջ էլ պատկանելիս լինէր: Բայց կարող էր միթէ ստրուկը դիմադրել իւր տիկնոջ կամքին: Կոստանդիանոս չունէր իրաւունք ազատ գործողութիւն և ընտրութիւն պահանջել այն մարդուց, որին ազատութիւն շնորհած չէր:

Վերջապէս մեր տխուր Դի-ցալմերիտ-Նեան, յալաֆս սարկիս-Նեան հին աշխարհում վերջ տանք, հայեացք գցելով ստրկի հասարակական, ընտանեկան և բարոյական վիճակի վերայ: Չեմ կարող չըզգուշացնել քեզ, ընթերցող, որ մենք այժմ ներս մտնելու ենք վիշտերի այն դռներով, որոց ետևում ևս աւելի կզարհուրեցնէ քեզ Բաբելոնեան վիշտն ու ցաւը մարդկութեան անարգուած իրաւանց համար, արտասուաց այն անհուն ծովի համար, որ անհնար է ցամաքեցնել, ինչպէս ծովի ջուրը:

Առանց չափազանցութեան կարելի ասել, որ Հոռովմուկան աշխարհի մեծագոյնը սուրբ և մալ նպաստին էր սպանել սարկի մեջ ամեն գեղարարից-Նեան, ոչնչացնել արամ հնար է նորա հոգին և նորա լոկ

Վարդանիս Բուշեի: «Ստրուկը հոգի չունի», ասում էին մօտիկ ժամանակներս ստրակատերերը. բոլոր հեթանոս հին աշխարհը մի նշանաբան ուներ, «ստրուկը մարդ չէ, այլ անբան կենդանի»: Մարդկային անձնաւորութեան առաջին նշանն է անունը, իսկ ստրուկն անուն չունէր: «Անուն, մականուն, ազգանուն, ասում է Վուինտիլիանոս, վայել են միայն ազատ մարդուն, իսկ ազատութիւն չունեցող մարդն իրաւունք չունի նրանցից և ոչ մէկն ունենալու»: Հին Հռովմում ստրկին կոչում էին տիրոջ անունով, զոր օրինակ Մարկոսի ստրուկ (Marcipor) Լուցիոսի ստրուկ (Lucipor), և այլն: Երբ ստրուկների թիւը շատացաւ, նրանց տալիս էին որևէ կոչումն ինչպէս մենք անում ենք շների կամ ձիերի վերաբերութեամբ: Մեծատանց տներում մինչև անգամ նշանակում էին առանձին վերակացուք (nomenclator), որոնց պարտականութիւնն էր բազմաթիւ ստրուկներին կոչումներ տալ և այս մարդիկ հնարում կամ գրտնում էին անուններ ստրուկների համար կամ դիցաբանութիւնից (Էրոս, Պերսէոս), պատմութիւնից (Պրիամոս, Կրեսոս) կամ աստղաբաշխութիւնից (Լուցիֆեր—լուսաբեր) և կամ ուղղակի մի կենդանու անուն էին տալիս (ursus — արջ, Iupus — գայլ):

Մենք սովորութիւն ունենք, ասում է Վարրոնը, ստրուկներին տալու այնպիսի անուններ, որոնք գործածութիւնից դուրս են եկած:

Եւ յիրաւի նոյն իսկ ստրկատիրոջ համար գուարճութիւն էր երբեմն իր ստրուկների համար կոչում հնարել: Ներկայումս էլ կան շատ պարոններ, որոնք գլուխ են յոգնեցնում իրանց շների համար անուն հնարելու վերայ: Ինչ վերաբերում է օրէնքին, սա ուղղապէս ուրանում էր ստրկի անձնաւորութիւնը: Ուլպիանոս ասում է՝ ստրուկ կամ որ և է այլ անասուն» (servus vel animal aliud): Կտակարարները յաճախ իրանց ստրուկներին դասում էին ի շարս շարժական կայքի, որոց թուում յիշուում են և եզներն ու ձիերը, այս վերջինները ստրուկների հետ մի յօգուածում էին նշանակուում: Վերևը մենք տեսանք, որ ստրուկը պատկանում էր որ և է արհեստանոցի կամ գործարանի, որի հետ միասին վաճառուում էր: Վաճառանոցում ստրուկների հետ վարուում էին ինչպէս ապրանքի հետ և ոչ իբրև կենդանի անձնաւորութեան հետ. վա-

ճառականները նրանց ծախում էին այլ ապրանքի հետ յմիասին և նոքա ենթարկուած էին մաքսի վճարման, ինչպէս անշունչ առարկաներ: Ա. Յովհաննէս Ոսկերերանն, արտասանելով իւր արդար դատովճիւղը մեծ բաբելոնեան պոռնկի, այսինքն Հռովմէ մասին, յայտնում է իւր մարգարէական խօսքն այսպէս, « Եւ վաճառականք երկրի ողբասցեն և սգասցեն ի վերայ քո՝ զի գրեռն նոցա ոչ ոք գնէ և շահք որ ի քէն ոչ ևս իցէ, ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց և մարգարտոյ և բեհեզոյ և ծիրանւոյ և ոսկեթելի . . . և ստացուածք ամենայն արջառ և ոչխար և երիվարաց և կառաց, որս վայել է մարմնոց և ոգւոց մաղկան . . . : (Յայտն. ԺԲ. 11-13)

Ստրկի ստորացումն մինչև գրաստի աստիճանին հասնում էր մինչև այնտեղ, որ մինչև անգամ ուրանում էին, ժխտում էին ամեն ներքին կապ մէկ ստրկի միւսի հետ, մինչև անգամ չէին ընդունում նորա մէջ սիրոյ զգացմունք առ իւր կիներ, անձնադրութիւն, անձնուիրութիւն առ զաւակս : « Սորսուիլը զուրաւել առեւնայ ընդամենի, նա էարող է զինել ամասին, հայր, եղբայր միայն այն որեւորում, երև այդ մարտական յարաբերումն իննեքեց նորա արքայ շահը վնաս զի կրել : «Երգուում եմ յանուն Հերակլէսի, այսպիսի բան երբ և իցէ տեսնում է արդեօք, գոչում են Պլաւտոսի կատակերգութիւններից մեկում հանգիսականք. Ահա՛ էլ ինչ են հնարել, Պսակ ստրուկների մէջ. Լսեցէք, ստրուկն ամուսնանում է ստրկուհու հետ: Լսեցէք. Այդ հօ հակառակ է բոլոր ազգերի սովորութեանց: Եւ յիրաւի Հռովմայեցւոց յատուկ մանր շահախնդրութեան ոգին նախանձախնդրութեամբ միջամտում էր ստրուկների ընտանեկան կեանքի մէջ և այստեղ էլ որոնում էր իւր շահն ու օգուտը: Երկրագործ կամ հովիւ ստրուկը կարող է ունենալ կին. հողից կամ հօտից ձրի իւր ապրուստը ստանալով նա կարող է սերունդ ունենալ, պտղաբերել, նորա տուած պտուղը տիրոջ համար կղառնայ շահի նոր աղբիւր: Այս շահն երբեմն այնպէս յափշտակում է մի քանի գիւղատունտանների, որ նոքա խոստանում են ազատութիւն այն ստրուկներին, որոնք երեք տղայ կձնեն, ոմանք մինչև անգամ մեկով բաւականանում էին: Այս ստրկատէրերն աշխատում են գնել ստրկուհիք աւելի բազմածին ընտանիքներից: Այս վերաբերութեամբ օրէնքը մինչև

Այս շահն երբեմն այնպէս յափշտակում է մի քանի գիւղատունտանների, որ նոքա խոստանում են ազատութիւն այն ստրուկներին, որոնք երեք տղայ կձնեն, ոմանք մինչև անգամ մեկով բաւականանում էին: Այս ստրկատէրերն աշխատում են գնել ստրկուհիք աւելի բազմածին ընտանիքներից: Այս վերաբերութեամբ օրէնքը մինչև

իսկ պաշտպան է հանդիսանում ստրկատիրոջ շահերին. եթէ վաճառականը ծախում էր ստրկուհուն իբրև բազմածնի և սա ամուլ կերևի՝ վաճառումն անվաւեր էր համարուում: Մի քանի դէպքերում տէրերը արգելում էին ստրուկների ամուսնութիւնը: Հացագործներին տնտեսական հաշիւը ստիպում էր արգելել իրանց ըստրուկներին ամուսնանալ, նոյնն էր և խոհարար և մառանապետ ստրուկների համար: Պլուտարքոս ասում է, որ Կատոն Աւագը իրատութեամբ հալածում էր ստրուկների ամուսնութիւնն ու կենակցութիւնը, որովհետև այդ պարզապէս վնաս էր ստրկատէրերին: «Խիստ տէրերն, ասում է Տէրտուլիան, արգելում են իրանց ստրուկներին կին ընտրել իրանց համար, իսկ ստրկուհիներին ամուսին օտար տնից»: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ այսպիսի սահմանափակութիւնից որքան ընտանեկան եղբերգական դէպքեր պատահում էին խեղճ ստրուկների կեանքում, որոնք ստիպուած էին ոչ միայն իրանց մարմնաւոր աշխատանքը նուիրել իրանց տէրերին, այլ և բարոյապէս բռնանալ իրանց վերայ ի հաճոյս տէրերի: Նրբեմն տէրերի շահախնդրութիւնն այնքան ետական էր լինում, որ հասցնում էր նրանց եղեռնագործութեանց:

Մի ստրկատէր իւր կտակով կարգադրել էր, ազատութիւն տալու Արեւտուզա ստրկուհուն, եթէ սա կծնի երեք արու զաւակ. նորա կրտակակատարը երեք անգամ հրամայեց խեղճ ստրկուհուն վիժել տալ արհեստական եղանակով, որպէս զի չկատարէ կտակի պատուէրը: Օրէնքն ազատեց Արեւտուզային նորա տիրոջ իշխանութիւնից այն հիման վերայ, որ տէրը իրարդատութիւն էր գործ դրել կտակի կատարումից շեղուելու համար. բայց այդ օրէնքը չկարողացաւ դրժբազդ Արեւտուզային վարձատրել այն բարոյական տանջանաց համար, որոնց նա ստիպուեցաւ ենթարկուելու: Ինչ և իցէ այս պատմութիւնը Հռոմի դատաստանական ժամանակագրութիւնից ցոյց է տալիս մեզ, թէ որպիսի դառն վիճակի մէջ էր հին աշխարհում ստրուկ կինը:

Օրէնքը մինչև անգամ չէր ճանաչում ամուսնութիւն ստրուկների մէջ: Նոցա մէջ կարող էր տեղի ունենալ բնակակցութիւն—կենակցութիւն, բայց ոչ պսակ ամուսնութիւն: Գոնէ այսպէս է ասում:

220 թ. օրէնքն, որ Դիոկղետիանոս Հրատարակեց: Տէրերի կամքով Հռովմայեցի մեծատանց տներում օրինական էր համարուած կանանց հասարակաց լինելը. մի կին ունէր երկու, երեք և աւելի ամուսիններ, ինչպէս ցոյց են տալիս գերեզմանաքարերի արձանագրութիւնք, որոնք հաւաքել էր Մովզէնը:

Հռովմէական իրաւաբանութիւնը չէր ճանաչում ազգականութեան կապ ստրուկների մէջ և միայն արձակեալ ստրուկը չէր կարող ամուսնանալ իւր աղջկայ, մօր և քրոջ հետ, իսկ ստրուկների մէջ, տիրոջ կամքով, կատարուում էին հրեշային սարսափելի ազգապղծութիւնք:

Եթէ լինէին էլ ստրուկների մէջ ամուսնական կապեր, որոնք երկու կողմից էլ սրբութեամբ պահպանուում էին, այդ էլ նշանակութիւն չէր կարող ունենալ: Տէրն իրաւունք ունէր ստրուկների ընտանեաց անդամներին վաճառելու զանազան անձանց, առանձին առանձին:

Այսպիսի դէպքեր էլ պատահած են: Տէրը ազատում էր իւր ստրկին, բայց ոչ մէկ կերպով չէր համաձայնում ազատելու նորակնոջն էլ և եթէ ազատ ստրուկը չունէր այնքան դրամ, որ թափէր իւր կնոջ, այդ երկու թշուառ արարածները ստիպուած պիտի լինէին ընդ միշտ բաժանուելու միմեանցից:

Այսպիսի դէպքերում ստրուկների մէջ այնպիսի զգացմանց արտայայտութիւն ենք տեսնում, որոնք պատիւ կարող էին բերել նոցատէրերին էլ: Մի սպանիացի ստրուկ, իւր տիրոջ կտակի զօրութեամբ ազատութիւն ստացաւ և նորա ժառանգութեան մի մասը, բայց կտակարարը մոռացել էր նորա կնոջ և ազնիւ ստրուկը տուեց իրան հասանելի բոլոր ժառանգութիւնն և թափեց իւր կողակցին:

Այս բարի մարդիկ պսակուեցան օրինական կարգով և շատ երջանիկ եղան, բայց քանի՞ քանի ստրուկներ էլ դժբաղդ մնացին: Ինչպէս տեսնում ենք, Յիսնաւորակի մէջ (օրինաց գիրք 50 գլուխ բաժանած) օրէնքն արած է երկչոտ թոյլ փորձեր ի պաշտպանութիւն անխզելի լինելուն ամուսնական կապերի ստրուկների մէջ, ի դէպս սոցա վաճառման, բայց այսպիսի դէպքում նա՞ օրէնքը դառնում է միայն տիրոջ մարդասիրութեան, ցոյց տալով նրան, որ

շատ խստութիւն է ստրկի ընտանեաց անդամներին առանձին առանձին վաճառելը, օրէնքի ոյժը սրանից չէր անցնում, իսկ ինչ վերաբերում է ստրուկների զաւակներին, սոքա Հէնց ծննդեան օրից ծնողներին չէին պատկանում, այլ սկզբում յանձնուում էին առանձին ստնտուներին և յետոյ դայեակներին, որոնք նրանց կրթութում էին: Այստեղ էլ յաճախ պատահում էին զարմանալի ծիծաղաշարժ իրողութիւնք: Հռովմէական իրաւագիտութեան մէջ կար օրէնք կայից բաժանման մասին ամուսինների մէջ: Պատահում է, որ կինն իբրև օժիտ մարդու տուն բերում էր ստրկուհիք, որոնք բազմածին էին լինում. այս շատ ուրախացնում էր տան տիկնոջ, որովհետև նոր ծնունդները ստուարացնում էին նորա օժիտը, բայց տրտմում էր մարդն, և հրաժարուում էր կնոջ ստրկուհեաց զաւակներին կերակրելու և կրթելու: Կարելի է երևակայել կնոջ ստրուկների խղճուկ վիճակը նորա մարդու տանն, երկու կրակի մէջ տեղում: Հռովմայեցի իրաւաբանները այսպիսի դէպքում իրաւունք են տալիս կնոջը դիմելու օրինաց պաշտպանութեան: Բայց ում յայտնի չեն այսպիսի պաշտպանութեան պտուղները ստորադրեալի համար: Աղեմէս Աղեքսանդրացին ցոյց է տալիս մեզ Հռովմայեցի ստրկատէրերի ողորմածութեան և հոգատարութեան օրինակներ իրանց ստրուկների թշուառ զաւակաց վերայ: «Փամանակակից ազնուական տիկնայք, ասում է նա, բուն մայրական գթով կերակրում են վառեկներին, բայց իրանց տանը ծնած ըստրուկների զաւակներին հրամայում են ընկենուլ»: Ստրուկի մայրն ու հայրը իրաւունք չունէին ողբալու իրանց զաւակին, եթէ սրան տիրոջ կամքով դէն էին գցում յանձնելով նրան բազդի բերմունքին, եթէ նրան ծախում էին, եթէ նրան խեղաթիւրում էին, եթէ նրան անպատուում էին և ստորացնում զանազան կերպով: Պլաւտոս դառն կատակով ասում է. «Ձեռ կարող հայր լինել, եթէ ստրուկ ես»: Խղճուկ արարած, ստրուկը չէ կարող ցոյց տալ հայրական զգայմունքներ: Ստրկուհին, ծնելով զաւակներ, երբէք չէր կարող յոյս ունենալ նրանց սզատ տեսնելու, եթէ ինքն ազատութիւն էլ ստանալու լինէր: Մենք վերը ասացինք, որ յաճախ մօր ազատութեան անհրաժեշտ պայմանն էր, որ նա ծնէր

երեք ստրուկ տղայք՝ որոնք դառնում էին տիրոջ սեպհականութիւն։ Պատահում էր, որ կտակով ազատութիւն ստացած ստրուկուհին ծնում էր այն ժամանակ, երբ դեռ ևս կտակը հաստատած չէր և այսպիսի դէպքում նորածին զաւակին, ըստ հռոմէական օրինաց, մնում էր տիրոջ տանը։ Մայրը, տեսնելով իւր ազատութեան արշալոյսն, զգում էր աւելի դառն վիշտ, նոյն ժամանակ իւր զաւակը ստրկութեան մէջ թողնելով, որ ապագայում պէտք է նրան ապականէր ի ցաւ իւր սրտի։ Գերեզմանների արձանագրութիւնք այսպիսի դէպքերի մասին ամեն մտածող մարդու տալիս են բազմադիմի մտածմանց նիւթ։ Ահա մի արձանագրութիւն, որ յայտնում է թէ ծերունի՝ ազատութիւն ստացած ծնողները աշխատեցան ազատութիւն ձեռք բերել իրանց զաւակների համար իրանց նախկին տէրերից, ահա միւս արձանագրութիւնն էլ ասում է զաւակները ազատել են փրկանքով իրանց հօրն և պարզամիտ ինքագովութեամբ յայտնում են, որ ՉՅ տարի շարունակ կերակրում էին իրանց աշխատանքով ծերունի հօրը, միւս տեղ եղբայրը աշխատանքով ո՞վ գիտէ պաղատանօք ազատել է եղբօրը։ Արքան ուրախութիւն էին զգում անշուշտ այս սրբազ մարդիկ անասելի դժուարութիւններով իրանց ջերմ ցանկութեանց հասնելից յետոյ։

Մեզ հասկանալի կլինի այս թշուառների ցանկութեանց լարուած գրութիւնն, երբ յիշենք այս դժբաղդ արարածների վիճակը նոցա տէրերի տներում։ Պլինիոսն ստրուկներին յատկապէս է անուանում։ Յիրաւի, նախկին ստրկիկները արտաշնաց անընդհատ շարք էր, որոնք կարող էին մարդոս յատկապէս լինան հասցնել։ Ինչպէս որ յունական դժոխքում կային տանջանաց զանազան աստիճաններ, այնպէս էլ ստրուկների մէջ կային թշուառներ և ամենաթշուառներ։

Ստրուկներից ամենախղճալիները նոքա էին, որոնք տիրոջ կամքով դատապարտուած էին մշտական գերութեան։ Տէրերն երբեմն իրանց վրէժխնդրութիւնն այն աստիճանի են հասցնում, որ իրանց կտակներում մահից ստաջ պարտաւորում էին իրանց ժառանգներին երբէք չարձակել մի քանի ստրուկներին, որոնք դժբաղդութիւն էին ունեցել ենթարկուելու նոցա բարկութեան։ Այս դասի ստրուկները սովորաբար ուղարկուում էին հեռաւոր գիւղեր երկիր մշակելու հա-

մար: Նոքա գնում էին գութանի ետեւից ձեռներն ու ստները շղթա-  
յակապ, նոցա երեսը խարած էր շանթացած երկաթով, աշխատան-  
քը վերջանելից յետոյ նրանց էրգաստուլումն էին փակում: Էրգա-  
ստուլա—ստորերկրեայ ամուր բանդ էր, որ լուսաւորուում էր վեր-  
րեւից մանր ծակերով, որոնց մէջ հազիւ կմտնէր մարդու ձեռքը: Այս  
տեղ պահուում էին ստրուկները, վատ կերակուր և զգեստ ստանա-  
լով, ենթարկուած կասաւարչի կատարեալ կամայականութեան:

Տէրը բոլորովին մոռանում էր նոցա գոյութիւնն և նոքա երբէք յոյս  
չէին ունենում նրանից ողորմութիւն, գթութիւն խնդրել կարողա-  
նալու: Միւս մշակ ստրուկներն ուղարկուում էին քարահանքներն  
և հանքերը. այս վերջինների կեանքն աւելի թշուառ էր, քան երկ-  
րագործ ստրուկներինը, որոնք գոնէ աշխատում էին բաց օդի մէջ,  
խիչ հանքերում մշակողները երբեմն և զազափար չունէին օրուայ  
լոյսի մասին, ամբողջ օր աշխատելով խոնաւութեան խաւարի և  
հեղձուցիչ վարակիչ օդի մէջ:

Աս բազմիցս տեսած էմ, ասում է հանքագործ մշակը, Պլաւտոսի  
գրուածքի մէջ քնից գարթելիս, պատկերների վերայ դժոխքի նկարը,  
բայց այն տեղն, ուր ես այժմ կերթամ պատկեր չէ, այլ իսկական  
դժոխք: Այնտեղ մարդու քոյր մարմինը, կարծես, լուծուում է  
անչափ աշխատանքից և յոգնածութիւնից:

Նոյնպէս շատ թշուառ էր ստրուկն, որին տէրն ուղարկում էր  
ազօրիք ցորէն ազալու մինչև կեանքի վերջը: Ահա Ապուլէոս ինչպէս  
է նկարագրում ազօրիքի մշակների չարչարանքը, ո՞վ աստուածներ,  
այս ինչպիսի խեղճ ու թշուառ մարդիկ են, նոցա քոյր մարմինը  
կապտած և շերտ շերտ վերքով ծածկած է խարազանի հարուածնե-  
րից: Հին շապիկը միայն ծածկում է այդ խեղճերի թիկունքը, նոցա-  
նից ոմանք ունեն միայն քուրձից կազմուած պարեգօտ, առ հասա-  
րակ ամենքի զգեստն այնպէս հին է, որ նոքա ծակերից երևում է  
մերկ մարմինը:

Նոցա ճակատներին կնիք է դրօշմած, գլուխները գերծած, ոտ-  
ները շղթայած է հասարակաց օղակի վերայ, մարմինը խեղած, կո-  
պերը ծխից խանձուած, օդի պակասութիւնից բորբոքուած, խա-  
ւարը զրկել է նրանց աչքի լուսից. ըմբիշների պէս ծածկած են աղով

և ալիւրի փոշիով» : Պլաւտոսը թողած է վշտալի նկարագիրը՝ ստրկի աշխատանքի, որ նոյնքան ազդու է և վշտալի ինչպէս Ռանտէին երեքտողեան ոտանաւորի տունը. Ալալիս են թուշառ ստրուկներն ուտելով իրանց փոխինդը. խորագանների հարուածներից և շղթաների շառաչիւնից շարունակ հառաչանաց ձայն է լսելի. կենդանի մարդոց կաշին նման է սպանած եզների պատառած մորթերին» :

Տան ստրուկների վիճակը համեմատաբար լաւ էր տէրերի աչքերից հեռու աշխատելու համար նշանակած ստրուկների վիճակից, Այստեղ տանը գոնէ երբեմն նոքա հանգիստ ունէին, թէև ստրուկների տօներն ու հանգիստը նշանաւոր էին ամեն տեսակ տգեղ երևոյթներով, որոնց մէջ արտայայտուում էին մարդկային բնութեան բոլոր անասնական բնագրումները : «Տէրերն, ասում է Աարրոն, չէին աշխատում ոչ կանոնաւորել և ոչ էլ սահմանափակել այդ անասնական միտումները, համոզուած լինելով, որ ստրուկները, կորցնելով իրանց ուժերը այդ կոպիտ բաւականութեանց վերայ, իրանք կխեղդեն իրանց մէջ բնագրական, բայց անգսպելի ձգտումն դէպի ազատութիւն» : Իսկ ստրուկները անմտաբար անձնատուր էին լինում անառակութեան և ցոփութեան, որպէս զի գէթ առ ժամանակ մոռացութեան տան կոպիտ և անախորժ իրականութիւնն : Երկու հռովմայեցի ստրուկների գերեզմանաքարերի վերայ տեսնում ենք հետևեալ արձանագիրը. «բազանիքը, գինին և սէրը թուլացնում են մեր մարմինը. բայց տալիս են մեզ ապրել», ասում է մի արձանագրութիւնը : Միւս արձանագրութիւնը ցոյց է տալիս իողճուկ ստրկուհու տխուր հիասթափումն, նորա խաբուած յոյսերը : (Fortuna spondet multa multis, praestat nemini. vive in dies et horas, nam proprium est nihil. (այսինքն. բազը շատերին շատ բան է խոստանում, բայց ոչինչ չէ տալիս. ապրի՛ր (վայելի՛ր) իւրաքանչիւր օրդու ժամդ որովհետև մենք ոչինչ սեպհական չունենք)» : Հասկանալի է, որ անառակութիւնն, որին սիրով անձնատուր էին լինում ըստրուկներն, աւելի և աւելի բթացնում էր նոցա չգարգացած ընդունակութիւնքը :

Հին ստրկատէրի շահն էր հասցնել ստրուկներին անասնոց վիճակին : «Ստրուկներից աւելի խելօքներն, ասում է գիւղատնտես Կո-

լուսկլան, ամենից վատ ստրուկներն են լինում»: Կատոնին հաճելի էր, որ նորա ստրուկներն երբ չէին աշխատում, քնոյ մէջ ընկլմած լինէին. քնուկ ստրուկներն ամենից խաղաղներն են: Եւ յիրաւի ստրուկների այդ «նղփայ»-լի-նն, «նհոփ»-լի-նը, նոցա կրա-որա-կա-լի-նը, նոցա հակամիտութիւնը դէպի անառակութիւն էին միայն զանազան եզանակներ, որոնց մէջ արտայայտուում էր նոցա յուսահատութիւնը: «Մենք» ասում է հին աշխարհի ամենընտիր մեծատունը՝ Սենեքան, ըստ անհրաժեշտութեան ստիպուած ենք վայելելու լացոյ և մեզ անիծոյ մարդոց ծառայութիւնքը:

Ստրուկներից ոմանք արտայայտում էին իրանց այս յուսահատութիւնը կատարեալ արհամարհանքով դէպի մահ. այնքան ծանր էր նոցա համար ստրկական վիճակն, որ պատիժ որոնում էին և մահն ընդունում իբրև վարձատրութիւն: Յայտնի է արձակեալ Եպաֆրոնդիտէսի Եպիկտէտոս ստրկի դիւցազնութիւնը:

Տէրը զուարճանում էր Եպիկտէտոսի ոտի ոլորելով. «դու կջախջախես դրան» ասաց Եպիկտէտոս: Եւ յիրաւի ոտը կտրուեցաւ: «Ես քեզ չասացի», սառնութեամբ արտասանեց ստոյիկեանը: Ասում են, որ ստրկին մեղադրում էին սպանութեան մէջ. ստրուկը հարկաւոր չհամարեց իրան արդարացնելու և ենթարկուեցաւ մահուան պատժի: Մի քանի ժամանակից յետոյ երևեցաւ այն մարդն, որին սպանած էին համարում: Մի ստրուկ ուզում էր փախչել իւր պարոնից և սորա համար դուրս գնաց քաղաքից, բայց ճանապարհին փոշիմանեց և կամրջից ընկաւ ջուրն ու խեղդուեցաւ: Ապուլէոսի յայտնի վիպասանութեան մէջ ասած է, որ խոհարարի խորովածի մի մասը յափշտակում են և նա խեղդամահ է լինում:

Բայց ի՞նչ մխիթարութիւն է տալիս դժբաղդ ստրկին նախնի փիլիսոփայութիւնը: Մեծատուններից ամենազնիւր՝ Սենեքան իւր խղճուկ բարեկամներին խորհուրդ է տալի մահուան մէջ որոնել ազատութիւն, կարճել իրանց տանջանքներն անձնասպանութեամբ: Այս խորհուրդը տրուում է ոչ միայն ստրուկներին, այլ և հարճերին, խիստ տէրերի ստրուկներին, որոնց վիճակը Տիբերիոսի, Կալիգուլայի և Ներոնի դարում երկար շարք էր տանջանաց:

«Եւրձրացրէք ձեր աչքերն», ասում է փիլիսոփան, և դուք կը-

գտնէք ձեր տանջանաց վերջը: Ահա անդունդ սորանով կարելի է հասնել ազատութեան: Ահա ծովը, գետը, ջրհորները — նոցա խորքումն է ազատութիւնը: Ահա մի քանի անտերև ճիւղեր ունեցող չորացած ծառը, սորա ճիւղերում կգտնէք ազատութիւն:

Ահա ձեր կոկորդն ու սիրտը — պատառեցէք նրանց և դուք կգտնէք ազատութիւն: Եթէ մահուան այս եղանակները ձեզ համար շատ զարհուրելի են, պահանջում են մեծ համարձակութիւն և առանձին ոյժ, կգտնուին աւելի թեթև միջոցներ էլ ազատութեան հասնելու համար: Դուք կարող էք բանալ ձեր մարմնն ոյ բոլոր երակները: Որպիսի սառնամանիքով ծածկում են մարդու հոգին փիլիսոփայի այս խորհուրդները, նա չունի յոյս ապագայ կենաց, ոչ մի նեցուկ և միտթարութիւն չունի դժբաղդութեան մէջ: Բայց երբեմն Սենեքայի խորհուրդները ստրուկներն այնպիսի եռանդով ի գործ էին դնում, որ ստրկատէրերն առանց ստրուկների էին մնում և բոլորովին սնանկանում: Մի քանի մեծատանց տներում երբեմնապէս իբրև տարափոխիկ ախտ իշխում էր անձնասպանութիւնը ստրուկների մէջ: Ի վուր օրէնքներն աշխատում էին այս ախտն արգելելու: Մինչև անգամ իրանք ստրուկներն աշխատում էին, որքան հնար էր, նուազեցնելու անձնասպանութեան զոհերի թիւը: Մի յուզարկաւորական ընկերութեան կանոնադրութիւն Վանուվիումում, ինչպէս ցոյց է տալիս արձանագրութիւնը, իւր անձնասպան անդամներին զլանում է թաղումն, Quisque ex quacumque causa mortem sibi asciverit, ejus ratio funeris non habebitur (իւրաքանչիւր ոք, որ որևէ պատճառով իրան մահ կպատճառէ, նորա թաղման համար հոգացողութիւն չի լինի):

Երբեմն յուսահատութիւնը խղճուկ ստրուկներին հասցնում էր խելագարութեան: Յռնաւորակը խօսում է խելագար ստրուկների մասին, որոնք պահպանուում էին հարուստ տներում և որոնց վաճառում էին թեթև զնով կամ ազատում էին: Որպիսի ծագր է և կատակ մարդկութեան վերայ, ստրկին ազատում էին այն ժամանակ, երբ նա խելագարուում էր:

Յայտնի բան է, խելագարութեան պատճառն, բնա մեծի մասին, էին ստրուկների բարոյական տանջանքները: Հետևելով այն գաղա-

փարին, թէ ստրուկը չպիտի ունենայ կամք, այլ պիտի բոլորովին հնազանդի իւր տիրոջ կամքին՝ թէ նա՝ ստրուկը չպիտի անպատու համարէ այն՝ ինչ որ նորա տէրը անարգելի չէ համարում, ստրկատէրերն հին աշխարհի աւելի սարսափելի կերպով տանջում էին իրանց ստրուկներին. բարոյապէս քան ֆիզիքապէս: Հների սովորութիւնն էր օգուտ քաղել, վաստակել իրանց ստրուկների անառակութիւնից: Սոսսիանոսի դատի առթիւ Ռիոկղետիանոս կայսրը գրում է նրան. «Քո դատիդ ընթերցումն ապացուցեց մեզ քո անառակ կեանքդ, բայց որովհետեւ դու բացառապէս քո ստրկուհիներիդ և ոչ ազատների ամօթխածութեան դէմ ես մեղանշած, դու ազատուում ես օրինական պատժից, բայց քո անունդ ու համբաւդ խայտառակուած են»: Այսպէս օրէնքը չէր պաշտպանում ստրկուհիներին իրանց տէրերի անամօթ անառակութեան դէմ:

Նոցա գեղեցկութիւնն արդեանց ազբիւր էր տիրոջ համար և ոչ ոք ուշ չէր դարձնում նոցա ցանկութեան վերայ իրանց ողջախոհութիւնը պահպանելու մասին, անարատ ընտանեկան կեանք վարելու ցանկութեան վերայ, և ոչ էլ նոցա հաւատարիմ ծառայութեան վերայ իրանց տէրերին: Ամեն նոր տէր կարող էր նրանց վաճառել անառակութեան համար: Ուստի և հին կտակներում պատահում են կտակարարների կարգադրութիւնք, որոնք արգելում են կտակակատարներին վաճառելու այս և այն ստրկուհիքն անառակութեան համար (ne prostituatur): Այս թշուառ անառակ ստրկուհիներից շատերն ազատութիւն գտնելից յետ վարում էին օրինակելի կեանք և ամուսնանալով կրթում էին և դաստիարակում իրանց զաւակներից արդար գործիչներ, իսկ նոցա աղջկունք դառնում էին ընտանեաց օրինակելի մայրեր:

Բայց նախնայելի ղեր սորկո-հո-կեանքը Հոովմ-մ, ըէ գո-ը նա առաջինն էլ սորկո-կեանք: Երբ նա չէր ամուսնանում իրան նրման արձակուած ստրկի հետ, նա անշուշտ պէտք է խորասուզուէր նոյն անառակութեան մէջ, որից փախչում էր: Ազատ աշխատաւոր կնոջ զբաղմունք անյայտ բան էր հին աշխարհում, միւս կողմից օրէնքն ամենեւին ազատութիւն ստացած ստրկուհու պատիւը պաշտպանելու համար ոչ մի ապահովութիւն չէր տալիս, նա

դիտէր պաշտպանել միայն Հռովմայեցի ազնուական կանանց:

«Ստրկութիւնն և նորա հետեանքներն, ասում է Ալլար, ցոյց էին տալիս իրանց իշխանութիւնն և այս խեղճ արարածների վերայ, որոնք իրանց սրտի խորքում առաքինի էին, արդար և անարատ. Հեթանոսութիւնն արհամարհում էր նոցա բարոյական տանջանքները, նա չէր ցանկանում լսել նոցա յուսահատութեան լացն ու կոծը»:

Հռովմայեցի մատենագիրներն և սոցա շարքում աննման Պլաւտոսն իւր կատակերգութեանց մէջ պահպանել է և աւանդել մեզ մի քանի սրտաշարժ տեսարաններ, ուր այն թշուառ արարածներն արտայայտում են իրանց քնքոյշ բուն կանացի բնաւորութիւնն, որ չէր կարողացել ապականել և երկարատե ստրկութիւնը: Ասենք երկու ազատած ստրկուհիների խօսակցութիւնը՝ նոցա ողջստիչ ցնորքները: Պլաւտոսի «*Կասաբէլլեաբէ*» կատակերգութեան մէջ մենք տեսնում ենք հետեւեալ տեսարանը: Խօսակցում են Պրիմնագիան և Սիլենիան:

Պ.Տ. «Ինչու այդպէս տխուր ես, բարի Սիլենիա: Դու ժպտել մուռացել ես. ի՞նչ կնշանակին մագերիդ յարդարման այդ անհոգութիւնն, այդ խորը հառաչանքներդ, երեսիդ այդ դեղնութիւնը: Ալլէն. Ես տանջուում եմ, իմ սիրտս պատուում է, իմ հոգիս տխուր է, ուստի և աչքերումս էլ տխրութիւն է արտախայլում. ես հիւանդ եմ. բայց ես չեմ կարող իմ տրտմութիւնս անմտութիւն չհամարել: Պ.Տ. «Գ. ծածկիր անմտութիւնդ քո կրծքումդ, թող մի տար նրան երեան դալու: Ալլէն. Բայց նա ինքը դուրս է թռչում սրտիցս: Պ.Տ. Ի՞նչպէս թէ սրտիցդ, Դու սիրտ ունիս: Ես սիրտ չունիմ, և եթէ մարդիկ ուղիղ են ասում, ոչ մի կին սիրտ չունի: Ալլէն. «Եթէ մենք ունինք սիրտ, այն ժամանակ իմ սիրտս տանջուում է. իսկ եթէ չունինք, այդ ոչինչ չէ նշանակում, ես այնուամենայնիւ տանջուում եմ: Պ.Տ. Այս կինն անպատճառ սիրում է մեկին: Ալլէն. իմ մոլորութիւնն, իմ անմտութիւնն ինձ տանջանք են պատճառում: Ես որքան հնար է ցանկանում եմ միշտ սիրել մի մարդու և իմ բոլոր կեանքս նրան նուիրել: Պ.Տ. Թո՛ղ այդ, այդ արտօնութիւնը միայն ազնուական կանանց է պատկանում. Այո՛, Սիլենիա, այս այսպէս է»:

ևս կանգ եմ առնում այստեղ, որպէս զի դուրս դամ «շուայլու-  
թեան», անչափաւորութեան և դժգոհութեան այս ճահճից, ուր  
հեշտասիրութեան մէջ իբրև ցեխի մէջ թաւալում են, ուր լսելի  
են գաղանական աղաղակներ, ուր կրքերն իրանց որջ են գտել,  
ուր չէ կարելի մտնել առանց խեղդուելու, ուր չէ կարելի ոտք դնել,  
որ չսահուիս, ուր անհնարին է լողալ առանց աղտոտուելու և որոյ  
(ճահճի) վերայ միշտ լսելի է տատրակների տխուր մնչիւնն» ինչպէս  
ասում է Ս. Ամբրոսիոս Մեղիոլանացին: Յաղթական երգերը մեր-  
ձենում են, նոքա կխեղդեն հառաջանքները: Թակարդը — ցանցը  
կխորտակուի և այն տանջուող հոգիք կազատուեն:

**ԽՈՐԵՆԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԵՐՆ**

**ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ**

Գ.

**ԽՈՐԵՆԱՅՈՒ ԶՈՐՐՈՐԴ ԳԻՐԷԸ**

Մեր այժմեան ունեցած Խորենացու Պատմութիւնը բաղկացած է երեք  
գրքից: Եթէ որ Թովմա Արծրունին, Խորենացուց չորս - հինգ դար յե-  
տոյ՝ գրապէս չվկայէր Խորենացու չորրորդ գրքի գոյութեան մասին,  
ոչոքի մտքից չէր անցնել այդպիսի մի գիրք ենթադրել, Բայց ինչպէս  
յայտնի է, Թովմա Արծրունին իւր Պատմութեան մէջ (Ս. Պետերբուրգ,  
1887, եր. 76) աշխարայ վկայում է Խորենացու չորրորդ գրքի կամ դըր-  
ուագի մասին, որից ինքը և քաղուածքներ է արել, Աւստի և պէտք ե-  
ղաւ որոնել այդ չորրորդ գիրքը, Խորենացու Պատմութեան արժէքը հաս-  
կացողը միայն կարող է գնահատել այդ կորուստի չափը, որ ունեցել է  
մեր գրականութիւնը այդ չորրորդ գրքի անհետանալովը, Աւստի և ակ-  
ներև է, թէ որչափ ցաւ պէտք է պատճառէր այդ կորուստը, և թէ քա-  
նի բանասէրներ պիտի ճգնէին, եթէ հնար է, վերագարձնել, գտնել:

(1) Տես Արարատ ամսագիր, հոկտեմբեր և դեկտեմբեր, 1890.